600.0496.15.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2017 թվականի №496Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №254Ա ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի №305Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով 2017 թվականի հոկտեմբերի 24-ից «ԱՐԱՐԱՏ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման փաստը (համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական էլեկտրոնային ռեգիստրի տվյալների)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2009 թվականի մայիսի 27-ի «ԱՐԱՐԱՏ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №254Ա որոշումը,
   2) 2014 թվականի հուլիսի 23-ի «ԱՐԱՐԱՏ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելը պարտավորեցնելու մասին» №305Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 24-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 նոյեմբերի 2017թ.